ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՍՐՈՊԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Լուսավորություն Մարաց)

§ 1

Ո՜րչափ մեծ եղավ ժողովրդի ուրախությունը, երբ լսվեց, թե Մեսրոպ՝ հայերեն գրերը ձեռքը, «աղօթեանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր քաղաքին», այն է Վաղարշապատ, թագավորական ու հայրապետական աթոռը։

Հազարավոր տարիներ անցել են այն օրից և դեռ որչա՜փ գեղեցիկ են հնչում ականատես և ոգեւորված մատենագրի հուզումնալից խոսքերը, որոնցով նա Մեսրոպի գալուստը նմանեցնում է Մովսես մարգարեի Սինա լեռից էջքին՝ տասնաբանյա աստվածաշնորհ պատվիրանները ձեռքին, մանավանդ թե, ասում է Կորյուն, Մեսրոպ ավելի բարձր էր քան Մովսես, որովհետև Մովսես իր ժողովրդի ուխտազանցության պատճառով սրտաբեկ եղավ, իսկ Մեսրոպ լցված էր հոգեկան բարձր մխիթարությամբ, որովհետև գիտեր, թե ի՜նչպիսի ուրախությամբ պիտի ընդունի իր ժողովուրդը իր բերած գրերը։

«Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն. չասեմք թէ առաւելոքն՝ պակասագոյն։ Քանզի յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրաման ի բազուկս այրն աստուածապէս, ի լեռնէն իջանէր. այլ վասն մոլէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տէրունիսն, և կործան յերկիր, տիբադրումբ յիւրեանց կուռս ձուլածուին երկիրպագանէին, և ցնորին հրամանաբերն սրբատառ սրտաբեկ լացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բեբեկեալն թախծութիւն։ Իսկ այսր երանելւոյն՝ վասն որոյ ճառեալքս յարդարէին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգևոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելոցն յօժարութիւնն, և ընդունելոցն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետարերօ (Կորյուն, էջ 11)։

Երբ Մեսրոպ մոտեցավ Վաղարշապատին, լուր տրվեց Վռամշապուհ թագավորին և Սահակ Հայրապետին, որոնք իրենց հետ առնելով ամբողջ նախարարական ավագանին՝ «զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխն», դուրս եկան դիմավորելու Մեսրոպին։ Հանդիպումը տեղի ունեցավ քաղաքից

* Շարունակված ամսագրի 1954 թվականի №№ XI-ից, XII-ից և 1955 թվականի №№ I-ից, II-ից, III-ից, IV-ից և IX-ից։

դուրս, դաշտում, Ռահ գետի եզերքը։ Այս գետի մասին ուրիշ տեղ հիշատակություն չկա, ուստի կարելի չէ ճիշտ տեղը որոշել։ Ինճիճյան (Ստորագրութիւն հին Հայաստանի, էջ 472) անորոշ կերպով ասում է. «Եւ դաղաքաւս (Վաղարշապատ) անցանէր Քասաղ գետակ, նաև Ռահ գետակ ինչ ի մօտակայս նորին ընթանայր, որպէս ցուցանել Կորիւնս։ Այժմ Վաղարշապատի մոտ Քասաղից զուրս ուրիշ գետ չկա, եթե ոչ Սև չուրը, որ և պիտի լինի նույն Ռահը։ Ռահ գետի մասին խոսում է նաև Ֆենտզլյան (էջ 22) և գտնում է, որ դա Երասխն է, որովհետև Հուսիկ և Տիրան էլ ըստ Բուզանդի իրար հանդիպեցան Երասխի մոտ «անցեալ ընդ կամուրջն Տափիրայ, ի քաղաքն մեծ յԱրտաշատս։ Ահա իր խոսքերը. «Ո՞ր գետն է Ռահ անսովոր անունով, որուն ուրիշ տեղ չենք հանդիպիր, և որ պետք է կարևոր գետ մը եղած ըլլա, մոտ Վաղարշապատի։ Ամենայն հավանականությամբ՝ Երասխ կամ Արաքս, որուն Կորյունի տված Ռահ ձևը կհիշեցնե ավանդական Ranga կամ Ranha»։ Ճիշտ է, որ Հուսիկ և Տիրան հանդիպած պիտի լինեն Երասխի մոտ, որովհետև Արտաշատի մոտից անցնող գետը Երասխն է, բայց Վաղարշապատի մոտից անցնող գետը Երասխը չէ, այլ Քասաղը կամ Սև գետը։ Վերջինը ընդունում ենք մենք։

Ահա այս գետի եզերքին տեղի ունեցավ փառավոր և սրտաշարժ հանդիպումը. երկու կողմերը տվին միմյանց «զցանկալի ողջոյնն», և այնուհետև ուրախության աղաղակներ բարձրացնելով, հոգևոր երգերով և օրհնության ձայներով դարձան Վաղարշապատ քաղաքը, որտեղ բոլորը միասին ուրախությամբ անցկացրին տոնական օրերը։

§ 2

Ավելի ընդարձակ և գեղեցիկ է պատմում Սասնեցին (էջ 45 և այլն) այս հանդիպումը, որ գնում է ո՛չ թե Վաղարշապատի մոտ, այլ Տարոնում. «Վասն որոյ յերթալն Նորա լերինքն ցնծային, այսինքն արքայն և եկեղեցին. և բլուրքն խայտային, աղատքն և իշխանքն. և գետքն ծափս հարկանէին՝ հոտապետքն և հովիւքն։ Այս սլլայանությամբ ամենքի ուրախությունը նկարելուց հետո, ասում է, թե երբ Մեսրոպ մոտեցավ իր հայրենի Տարոն գավառը, «և ի հասանելն Նորա ի գաւառն իւրս, Սահակ կաթողիկոսը բազմաթիվ կրոնավորների՝ եպիսկոպոսների և քահանաների հետ եկավ Մեսրոպին դիմավորելու։ Բայց այդ խմբի մեջ չէր Վռամշապուհ, որ ըստ Սասնեցու, ինչպես հետո պիտի տեսնենք, այդ միջոցին գտնվում էր Միջագետքում։ Դիմավորողները համբուրեցին Մեսրոպին և իբենների՝ իբրև Հիսուսին և նրա աշակերտներին. «Ե համբուրէին զնա իբրև զՆոյն ինքն զՅիսուս, և կամ զաշակերտս Նորա։ Եւ տեսանէին զերեսս Նորա իբրև զերեսս հրեշտակի, և հաւատային տեսլեան Նորա» (այսինքն գրերի գյուտի տեսիլքը, որ Մեսրոպ այնտեղ նրանց պատմած պիտի լիներ)։ Մեսրոպ ցույց է տալիս Սողոմոնի Առակաց գիրքը, որ ինքը իր աշակերտների հետ թարգմանած և Հոովհանես գրչին գրել էր տված։ Առաջին անգամ էր լսում ժողովուրդը գրքի միջից հայերեն ձայն. և այդ առաջին հայերեն գրքի ընթերցումը մեծ և անօրինակ ուրախություն պատճառեց նրանց. «Եւ ընթերցեալ բերկրէին, խաղային, խայտային և ի ձայն մեծ գոհութիւն ի բարձունս [ի] վեր առաքէին տուողին զանեղրական պարգևսն. և պար առեալ՝ պատուէին զառաքեալն և զվարդապետն և զերկրորդ Լուսաւորիչն։

Այնտեղ Սահակ կաթողիկոսը տարածեց իր ձեռքերը և երկինք բարձրացնելով իր աչքերը՝ օրհնեց թե՛ առաքողին և թե՛ առաքյալին. իրեն հետևեց ժողովուրդը. և ամեն ոք օրհնություն տվեց «Լուսոյն աշխարհի, որ լուսաւորեաց զմեզ ի ձեռն մեծին Մեսրովրայ»։

Սասնեցին (էջ 46—50), գնում է նաև մի երկար աղոթք իրը Սահակի բերանից, որով նա շնորհակալություն է հայտնում Աստուծուն՝ իր մեծաշնորհ պարգևների համար՝ Լուսավորչի և Մեսրոպի միջոցով։

Աղոթքից հետո Սահակ, իր հետ առնելով նաև Մեսրոպին, մտավ Ս. Կարապետի Ինակնյան վանքը, այնտեղ ճգնող հինգ հարյուր ! միանձների մոտ, որոնք հրճվելով Մեսրոպի պատ և աստվածային հրաշքի վրա, մտան տաճար, և կարդացին պատշաճավոր աղոթքները, փառք տալով Աստուծուն և երկար կյանք խնդրելով Մեսրոպին։ Սահակ խոնարհեց իր քահանայապետական գլուխը Ս. Կարապետի դերեզմանի առաջ, իրեն կենդանի էակի և արավ այն գովեստը, որ մեջ է բերում Սասնեցին՝ էջ 50—52։

Նույն օրը վանքում հյուրասիրություն գտնելուց հետո, հետևյալ օրը ճանապարհ ընկան հետիոտն։ Անցան Եփրատ գետի

մյուս երեսը և այնտեղ հանդիպեցան Վռամշապուհ թագավորին, որ իր զորքով միասին գալիս էր Միջագետքից։ Նա արդեն լսել էր եկեղեցիներ, և երբ տեսավ երկու կրոնապետներին, դեռ հեռվից իջավ ձիից և հետիոտն նրանց դեմ եկավ։ Սուրբ իջավ նրանց առջև և երկրպագում էր հայրապետին ու վարդապետին։ Բաց արեց կուրծքը, խնդրում ու տանում էր օրհնություն ու համբույր։ Նույնն էին անում նաև իր զինվորները։

Ամբողջ խումբը դիմեց այն Անապատը, որ առաջ Արշակունի թագավորների սեփականությունն էր եղել, իսկ հետո Տրդատ նվիրել էր եկեղեցուն։ Նույն Անապատում կանգնած էր Առաքելոց վանքը, բաց Բուզանդի կոչված «Հանդիստ առաքելոց» (Գ. ժդ.), ուր դեռևս գտնվում էին առաքյալների նշխարները։ Այս վանքումն էր սովորել Մեսրոպ և այստեղ էր Սահակ Ձեռնադրվել հայրապետ, ինչպես ուզում է հավատացնել Սասնեցին՝ ասելով՝ «ուր էր վարժեալ Մովսէս և օծեալ Ահարոն»։

Այս վանքին այցելության դնացին Վռամշապուհ թագավորը, Սահակ կաթողիկոս և Մեսրոպ վարդապետ։ Իրենց հարակիցների հետ։ Երկրպագեցին սուրբ տեղերին, բնաներ մատուցին առաքելական նշխարներին և հետո եկան 107 խստակյաց ճգնավորների տեսության։ Այս ճգնավորները ապրում էին իրենց ձեռական աշխատությամբ և միայն հաց ու ջուր էին ճաշակում։ Նրանց վանքը «արիւնաւոր կերակուր», այսինքն մսեղեն երբեք մուտք չէր գործել։ Նրանք թեև ունեին թագավորներից նվիրված գյուղեր և ավաններ, բայց ամբողջի եկամուտը տալիս էին աղքատներին և այրիներին։

Ճգնավորները ճանաչեցին իրենց հին ընկերակից Մեսրոպին. փաթաթվեցին իրար և ամին սուրբ ոգեյներ։ Ուխտավորները տեսնելով սրբություններն ու ճգնավորների խստամբերությունը, ճգնավորներն էլ լսելով երկնային շնորհների հայտնությունը, որ նեռում ու փառք էին տալիս։

Իրենց ուխտը կատարելուց հետո, ամեն մարդ իր գործին գնաց, ասում է Սասնեցին, «ոմն ի դատել և ի պատժել և զիրատունս սիրել, ընդ տուսուան սպանանել և սատակել զքիրեալսն յուղոյն ճշմարտէ. և միւսն հոգեւոր դատապանն յանդիմանեալ սատանայ մեղադրեալ, և իշուցանել զիւղն ի մուրուսն և ի դրատանեն։

§ 3

Այս բոլոր տեղեկությունները, որ Սասնեցու հրատարակիչը՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան (տես, էջ 44, 52 ծանոթ.) համարում է մանրամասնություններ, որոնք իբր թե քաղված են այժմ կորած մատենագիրներից, մեր կարծիքով Սասնեցու վաղ երևակայության ծնունդ են և՝ գուցե որևէ պատմական արժանիքից և վավերականությունից։ Սխալներ էլ շատ կան նրանց մեջ։ Երբ Կորյունն այնպես պարզ ու որոշ կերպով ցույց է տալիս, թե հանդիպումը տեղի ունեցավ Վաղարշապատի մոտ, ինչպես բնական էր, Տարոնն ու Ս. Կարապետը ուստ են և Սասնեցուն մնում է լսել։ Նաև ժամանակագրական սխալ է Սասնեցու այն տեղեկությունը, թե Վռամշապուհ մինչև այն ժամանակ գտնվում էր Միջագետքում և այդտեղից վերադարձին միայն պատահեց Մեսրոպին ու Սահակին՝ Մուշի մոտ, նեքրաս գետի եղերքը։ Վռամշապուհի համբորդությունը դեպի Միջագետք մի տեղեկություն է, որ չունեն մյուս աղբյուրները և առաջին անգամ գիտե միայն Խորենացին (Բ. ծբ.)։ Սասնեցին էլ նրանից է քաղում։ Բայց Խորենացին այս համբորդությունը դնում է ոչ թե գրերի գյուտից հետո, ինչպես անում է Սասնեցին, այլ նրանից շատ առաջ։ Այնպես որ Խորենացու պատմությամբ. երբ Վռամշապուհ Միջագետքից դառնում է Վաղարշապատ, նոր միայն տեսնում է, թե Սահակ և Մեսրոպ ժողով են գումարել գրերի գյուտի վրա խորհրդակցելու համար։ Այնուհետև տեղի է ունենում Դանիելյան գրերի առաքումը, երկամյա փորձ. Մեսրոպի ճանապարհորդություններ և վերջապես հայերեն գրերի գյուտը։ Ըստ որում Վռամշապուհի վերադարձը Միջագետքի համբորդությունից տեղի ունեցած պիտի լինի Մեսրոպի վերադարձից առնվազն երեք տարի առաջ. ինչպես նախորդ գլխի հաշիվներից երևում է։ Բայց սրանից. մինչև իսկ եթե Վռամշապուհ հիշյալ նույն ժամանակ վերադարձած լինեն Միջագետքից, մի՞թե միասին չպիտի գային ինքն ու Մեսրոպ, որ նույնպես Միջագետ-

բումն էր գտնվում և որ ճիշտ այն ժամանակ վերջացրել էր իր գործը։ Մեսրոպ մեծ հաճույքով անշուշտ պիտի շտապեր ներկայացնել իր գյուտը Վռամշապուհին, որ նույնպես որոշ մասնակցություն ուներ այդ գործում։ Վերջին պարագային չի կարելի անշուշտ առարկել, թե ըստ Սասնեցու, Մեսրոպ այն ժամանակ ո՛չ թե Միջագետքում, այլ Բայուումն էր գտնվում, որովհետև Բայուի ավանդությունը մեզ համար գոյություն չունի։

Վերջապես Կորյուն ասում է, թե երբ Մեսրոպ գրերը բերավ Վաղարշապատ և տեղի ունեցավ Սահակի հանդիպումը, այնտեղ էր նաև Վռամշապուհ, ուստի չէր կարող միաժամանակ Միջագետքում լինել. «Եւ արդ եկեալ յիշելին (Մեսրոպ) մերձ ի թագատրական քաղաքն, ազդ լինէր բազաւորին և սրբոյ եպիսկոպոսին։ Որոց առեալ դամենայն նախարարագունդ... ի քաղաքն ելեալ պատահեին երանելւոյնս։

Մնացյալ տեղեկությունները, որ տալիս է Սասնեցին, ինչպես օրինակ վանքերի այցելությունը, Սահակի երկարաշունչ աղոթքները, ժողովրդի ուրախական ցույցերը և այլն և այլն, այնպիսի բաներ են, որ միշտ կարող են եղած լինել և անշուշտ այն ժամանակ էլ տեղի ունեցած պիտի լինեին, եթե միայն Սահակ և Վռամշապուհ Տարոնում հանդիպած լինեին Մեսրոպին։

§ 4

Մեսրոպ հղացել էր հայերեն գրերը հնարելու և հայ դրականության հիմ դնելու մեծ գաղափարը։ Հակառակ զանազան թյուրիմացությունների, որոնք արդեք եղան իրեն և այնքան ձգձգեցին իր գործը, նրան վերջապես հաջողվեց հորինել հայերեն այբուբեն և թարգմանեց առաջին հայերեն գիրքը։ Բայց ավելի կարևորը այս չէր։ Գործը թերևս կմեռներ իր խանձարուրի մեջ, եթե չլիներ մեկը, որ տարածեր Հայաստանի պես ընդարձակ երկրի այն բոլոր գավառները, որոնք լեռներով ու ձորերով անջրպետված իրարից, ավատական կարգերի պատճառով հաճախ իրար թշնամի, հայկական, հունական և պարսկական՝ երեք տարբեր կողմնորոշմամբ միմյանց հակառակ կորդ. գրեթե առանձին ազգեր ու երկրներ էին ներկայացնում։ Օրիասասարդական ավյունով լի, գործի հաջողության հավատով լցված, խանդավառ ու եռանդուն Մեսրոպ եղավ այն անձը, որ այդ գործը կատարեց։

Մեսրոպ քիչ ժամանակ Վաղարշապատում մնալուց հետո հրաման առավ թագավորից և ճանապարհ ընկավ գիրն ու գիրքը տարածելու Հայաստանի բարբարիկ գավառների մեջ։ Մարաց խուժադուժ կողմերն եղան, որոնք բախտ ունեցան վայելելու առաջին անգամ Մեսրոպի քարոզությունը։ Մարաց կողմ ասելով պետք է հասկանալ այստեղ ոչ թե բուն Մարաստան կամ Ատրպատական, այլ, ինչպես ցույց է տալիս Խենֆիցյան (Հնախօսութիւն, Գ, 84), Հայաստանի Փայտակարան նահանգը։ Այս տեղի ժողովուրդը ոչ միայն իր ավազակարարո բնության, այլև իր օտար ու անհասկանալի լեզվի (մարերեն կամ իրանական մի այլ լեզու) պատճառով դժվարամատչելի էր։ Թե ի՛նչքան մեաց Մեսրոպ Փայտակարանում, չի գրում Կորյուն, բայց համառոտակի նշանակում է Մեսրոպի գործունեության հարյուր արդյունքը։ Սերունդը դաստիարակելու համար Մեսրոպ իր մոտ աշակերտ առավ նույն բարբարոս ժողովրդի երեխաներին և ոչ միայն պետական մայրաքաղաքում հայերեն սովորեցրեց նրանց, այլև կրթեց քրիստոնեական դիտության մեջ այնպես, որ այնուհետև թողեցին իրենց ավտոգակությունը, դարձան օրինապահ և կրթված քաղաքացիներ։

Մեսրոպ միայն աշակերտներին սովորեցնելով չբավականացավ, այլև ձեռք առնելով ավետարանական մշակության գործը քարոզեց տեղաց ժողովրդին։ Այս քարոզության համար նա մի կողմից թարգմանում էր Ավետարանը և մյուս կողմից գրի առնելով այն՝ նրա վրայից սովորեցնում էր ժողովրդին՝ հասկանալի լեզվով։

Այս քարոզության ժամանակ անշուշտ մենակ չէր Մեսրոպ, այլ ուներ նաև իր հետ մի քանի օգնականներ, ինչպես ցույց է տալիս Կորյունի հաստատածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին։ Հոգեկան բարյացակամությունը։

Կորյունի ակնարկություններից այնպես է երևում, որ Սահակն էլ Մեսրոպի նման բարոյական գործունեություն էր սկսել։ Կաթողիկոսի գործունեության սահմանը պիտի չուներ Այրարատյան գավառ կամ նրանից միայն քիչ հեռու տեղեր. «Ուստի և նոսանելի հարցն մեզոց համարձակութիւն առեալ յուսալից փութով. և երենելի և արդիւնակատար բան աւետարանին՝ դիւրանց մշակութիւնն ցուցանէին (տպ. ցուցանեն)... ի ձեռն երկոցուն եռաստարեղոցն...» (Կորյուն, էջ 12—13)։

Քարոզչություններ աշխույժ կերպով առաջ էր գնում. հունարեն և ասորերեն բնիկները ետ քաշվեցին և նրանց տեղը լրջորեն հարազատ հայերեն լեզուն։ Ս. Գրքի պատմությունն ու վարդապետությունը տարածվեցին ամեն տեղ, մինչև իսկ այնպիսի խավերի մեջ, որոնք Երուսաղեմի անունն անգամ չէին լսել։ Ինչպես հայերեն լեզվով բնիկացությունը այնպիսի իրանդավառ ոգևորություն բերեց ժողովրդին, որ ամեն մարդ փափագում էր սովորել նոր գրերը։ Փարպեցին դեղեցիկ է նկարագրում այս պատկերը ասելով՝ թե ասորերեն լեզվի տանջանքներից ազատված ժողովուրդը այնպես էր ուրախանում՝ ինչպես խավարից դեպի լույս եկողը։ «Քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ լսասրի տանջանացն զերծեալք ի լոյս՝ խնդային» (Փարպեցի, էջ 42)։

Խանդավառ կերպով է նկարագրում նաև Կորյունը մեր երկրի այս երջանիկ շարժումը, իսկ Ասողիկ ավելացնում է. «Սկիզբն դպրութեանս Հայոց եղև սկիզբն մեծ գիտութեան և անպայման խնդութեան բազում աշխարհաց, զի ոչ միայն Հայոց, այլ և Վրաց և Աղուանից առաւ զիր ի խնամոցն Աստուծոյ (էջ 74)։

§ 5

Երբ Սահակ և Մեսրոպ տեսան, որ նորագյուտ տառերն արդեն բավարար են և Ս. Գրքի թարգմանության գործը հաջող է գնում, վստահ իրենց նախնական փորձի հաստատության վրա, որոշեցին հիմնել հայկական առաջին վարդապետարանը։ Վարդապետարանի նպատակն էր հավաքել աշակերտներ, սովորեցնել նրանց նորագյուտ տառերը, կրթել ավետարանական ուսման մեջ և այսպես՝ նոր քարոզիչներ պատրաստելով՝ ուղարկել դեռևս կռոտմների ժողովրդին քարոզելու համար. «Խմբելին ուսուցանել և թելադրել, և պատրաստական քարոզութիւնն անդէպ մարդկան յորինել» (Կորյուն, էջ 13)։

Վարդապետարանը բացվեց Վաղարշապատում՝ Հայրապետարանի մոտ։ Աշակերտ հրավիրելու համար մասնավոր հայտարարության պետք չկար. նրա բացման լուրը լսվեց թե չէ, ահա ամեն կողմից զունդազունդ թափվեցին գիտության աղբյուրից հաշակելու համար. «Որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստանի աշխարհին յարկեալք և զրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն դիտութեանն Աստուծոյ։ Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և բահանայապետացն, ըղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն, էջ 13)[1]։

Վարդապետարան մտան ոչ միայն քարոզչության պատրաստվող աշակերտները, այլ՝ միշտ նրա մոտ գտնվող արքունիքն ու նախարարական դասը. «Ն իրենց անդէն դարձեալ արքունիսն, հանդերձ ամենայն ազատազունդ բանակիւն՝ աստուածեղէն իմաստութեամբն վարդապետաց։ Սահակը հատկապես հոգ տարավ իր խնամի Մամիկոնյանների կրթության, որոնց գլխավորն էր Բայն Վարդան Մամիկոնյան (կամ Նաև կոչված Վարդիան), որ հետո հայոց կրոնական շարժման գլուխ կանգնելով, նահատակվեց մեծ պատերազմում 451 թվին։ Բայց ընդհանրապես Սահակի ջանքն էր ամեն մարդու մեջ աճեցնել քրիստոնեական հավատը և հասցնել ճշմարիտ գիտության. «Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեանն»։

Երբ վարդապետարանի աշակերտները հասան բավական կատարելության, այնպես որ

1. Մեսրոպի ժամանակ բացված Հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի, կրթական մեթոդի, դասագրքերի և այլ մանրամասնությունների մասին բավական բնագրական խոսում է Ար. Մովսիսյան՝ «Հայոց դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը («Համալսարանի գիտական աշխատություններ», էջ 345)։

այլևս կարող էին իրենք էլ քիչ թե շատ ուրիշներին սովորեցնել. Սահակ և Մեսրոպ նրանց այլևայլ խմբերի բաժանելով՝ այնպես դաս-դաս ուղարկեցին Հայաստանի զանազան գավառները, քարոզության համար։ Այս խմբերից մեկի մեջ էր նաև Կորյունը։ Սահակը և Մեսրոպը իրենց անձը և իրենց գործը օրինակ և կանոն տվին նրանց և պատվիրեցին մնալ նույն կանոնի մեջ, նույն վարդապետական գործը շարունակելով։ Երկու վարդապետողների այս գործի առթիվ Կորյունը նրանց կոչում է «եկեղեցւոյ սիւն» և իրենց կատարած գործը համեմատում է Քրիստոսի ավետարանիչների գործի հետ, որոնք ի սփյուռս աշխարհի քարոզեցին կենաց բանը։ «Որ և սկսան սիւնք եկեղեցւոյ՝ միշամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել. զումարել ի կողմանս ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դաս դաս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոյ» (Կորյուն, էջ 13)։

Այտընյանը (Քննական քերականութիւն, էջ 41 ծանոթ.) կարծում է, թե այս խոսքերը զրաբար հայերենի ուսման համար է ասում Կորյունը. իբր թե վարդապետարանում Մեսրոպի նպատակներից մեկն էլ իր կազմած Քերականությունը աշակերտներին սովորեցնելն էր։

§ 6

Վարդապետարանի բացման առթիվ Կիրակոսն էլ մի տարօրինակ տեղեկություն է տալիս. «Եւ ժողովեն այնուհետև մանկունս բազում և ուսուցանեն զրովանդակ աշխարհս, և բաժանեն զմանկունս մատաղս և քաջուսմունս, փափկաձայնս և երկարոդիս, և կարգեն դպրոցս Երկուս ասորերէն և յունարէն» (Կիրակոս, էջ 15)։ Երկու դպրոցների հաստատությունը կատարյալ թյուրիմացություն է։ Հայերեն դրերը գտնվելուց և հայ գրականության հաստատությունից հետո էլ ի՞նչ ասորի և հույն դպրոց։ Ասորի և հույն դպրոցների մասին խոսում է Կորյուն՝ Մեսրոպի Եդեսիա գնացած ժամանակ, ուր իր աշակերտներից՝ «զոմանս յասորի դպրութեանն կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն», բայց ո՞չ թե Հայաստանում հույն և ասորի դպրոցներ էր բաց անում։ Ահա թե ի՞նչ է նշանակում բնագիրը խեղաթյուրել։

§ 7

Հարց է, թե Հայաստանի այս գրական ու կրթական շարժման առթիվ ի՞նչ դիրք էր բռնել պարսից պետական կառավարությունը, որի թևարկության տակ էր այն ժամանակ Հայաստանը։

Հայոց գրական շարժումը շահավետ էր պարսից պետության համար երկու տեսակետով։ Նախ՝ հայերը այսպիսով բաժանվում էին հույների ազդեցությունից և կազմում էին առանձին ինքնուրույն միություն։ Երկրորդ՝ նոր գրական շարժման վերջին արդյունքն այն էր, որ ասորերենի տեղ հայերենն էր գալիս, ինչ որ նույնպես շահավետ էր պարսից քաղաքականության համար՝ «Բաժանեա՛ զի տիրեսցես» սկզբունքի համաձայն։ Ահա այս երկու պատճառներով ո՛չ մի արգելք, ո՛չ մի հակառակություն չի տեսնվում պարսից գերագույն իշխանությունից և հայերը զոնե այս կետում վայելում են լիակատար ազատություն (այս մասին տե՛ս և Օրմանյան, Ազգապատում, Ա, 277—278)։

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մեսրոպ դարձավ Հայաստան. Վաղարշապատի առաջ՝ Ռան գետի եզերին դիմավորեցին իրեն մեծ հրճվանքով.— 2. Սասնեցին այս հանդիպումը դնում է Տարոնում (Ս. Կարապետ).— 3. Ճիշտ չէ այս տեղեկությունը։— 4. Մեսրոպ չբավականացավ միայն ճնարելով հայ տառերը և թարգմանելով առաջին հայ գիրքը, այլ նա սկսեց տարածել ամեն կողմ. նախ քարոզեց Փայտակարանում (Մարաղ կողմ), մինչդեռ Սահակ քարոզում էր Այրարատում. մեծ էր ոգևորությունը.— 5. Սահակ և Մեսրոպ Վաղարշապատում հիմնեցին առաջին վարդապետարանը (ուսուցչանոցը).— 6. Սխալ է Կիրակոսի այն տեղեկությունը, թե նաև ասորի և հույն ուսման համար դպրոց բացին.— 7. Պարսից պետությունը քնավ արգելք չճանեց հայոց գրական շարժման դեմ, որովհետև դրանով հայերը ավելի էին բաժանվում հույներից։

(Շարունակելի)